ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 04 » հոկտեմբեր 2022թ. No 4639 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2022 թվականի հունիսի 10-ի N 96 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը, ինչպես նաև հատուկ տնտեսական միջոցների կիրառման պատճառով հանրապետության դեղագործական շուկայում դեղերի բացակայության վտանգի առաջացման պայմաններում դեղերի անխափան շրջանառությունն ու հասանելիությունն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Արայիկ Բաղրյանին՝

ա) Հայաստանի Հանրապետությունում մարդու օգտագործման դեղերի պետական գրանցման հայտերի ընդունումը մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը հայտատուի դիմումի համաձայն իրականացնել կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 78 որոշմամբ սահմանված գրանցման և փորձաքննության կանոնների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

բ) Սույն հրամանի մասին իրազեկել դեղերի պետական գրանցման հայտատուներին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157